



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
Հ Ր Ա Մ Ա Ն

23 Տարբ./ 2011թ.

N 689 -Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 1-06/106-Ա  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով “Հարկային ծառայության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 11<sup>1</sup>-րդ հոդվածը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Հաստատել “Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2006 թվականի մարտի 16-ի “ՀՀ կառավարության 24.07.1997թ-ի թիվ 294 որոշման համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ ԿԱ ՀՊԾ տրամադրված տեղեկատվության հաշվառման և իրացման աշխատանքների կանոնակարգման մասին” N 1-06/106-Ա հրամանում կատարվող փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Նախագահ

Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 24.07.1997Թ-Ի ԹԻՎ 294 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱ ՀՊԾ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» N 1-06/106-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Հրամանի կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“1. Սահմանել, որ ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացված չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումների մասին ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացված տեղեկատվությունը միաժամանակ հաշվառվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ վերահսկողության վարչության և ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության կողմից:”:

2. Հրամանի 2-րդ կետում՝

1) “Սոցիալական վճարների և եկամտահարկի հսկողության վարչության պետ” բառերը փոխարինել “ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ” բառերով.

2) “զ” ենթակետում “ՀՀ ԿԱ ՀՊԾ եկամուտների հաշվառման, պլանավորման և վերլուծության” բառերը փոխարինել “ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության” բառերով:

3. Հրամանի 3-րդ կետում՝

1) “ՀՊԾ” բառը փոխարինել “ՊԵԿ” բառով.

2) “ա” ենթակետում “ՀՀ ԿԱ ՀՊԾ սոցիալական վճարների և եկամուտների հսկողության” բառերը փոխարինել “ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման” բառերով:

4. Հրամանի 4-րդ կետում՝

1) “ՀՊԾ պետի” բառերը փոխարինել “ՊԵԿ նախագահի” բառերով.

2) “ՀՊԾ պետին” բառերը փոխարինել “ՊԵԿ նախագահին” բառերով: